ՖՈՒՏԲՈԼ

# Ֆրանսիայի հավաքականը առանց Ջորկաեֆի էլ ջախջախեց թուրքերին

Չորեքշաբթի ֆուտբոլային օր էր Եվրոպայում. երկու տասնյակից ավելի ազգային հավաքականներ ընկերական հանդիպումներ անցկացրին, աշխարհի առաջնության ընտրական խաղեր տեղի ունեցան եվրոպական երկրորդ խմբում:

Թուրքիա մեկնելուց հրաժարվել էր մեր հայրենակից Ջորկաեֆը: Նշանավոր ֆուտբոլիստը, որն ակտիվորեն հանդես է գալիս Հայոց ցեղասպանության ճանաչման օգտին, իր քայլը նա հենց դրանով էլ բացատրել է: Ջորկաեֆին աջակցեց նաեւ Ֆրանսիայի հավաքականի գլխավոր մարզիչ Ռոժե Լեմերը: Նա նույնպես հիշեցրեց, որ երբ երկու տարի առաջ անցկացվեց Թուրքիայի եւ աշխարհի հավաքականների հանդիպումը, թուրքերն անցանկալի համարեցին Ջորկաեֆի ընդգրկվելն աշխարհի հավաքականի կազմում:

Առանց Ջորկաեֆի էլ աշխարհի ու Եվրոպայի չեմպիոն Ֆրանսիայի հավաքականը ջախջախիչ պարտության մատնեց թուրքերին: Դեռ առաջին խաղակեսում ֆրանսիացիներ Տրեզեգեն, Վիլտորը եւ Միկուն 3 անգամ գրավեցին դաշտի տերերի դարպասը, իսկ հանդիպման երկրորդ կեսում Ռոբերը վերջակետ դրեց 4-0:

Նշանավոր Ռուդի Ֆյոլերը վերջերս է ստանձնել Գերմանիայի հավաքականի գլխավոր մարզչի պաշտոնը, եւ նրա «նորամուտը» անհաջող ստացվեց: Գերմանացիները հյուրընկալվելիս 1-2 հաշվով պարտություն կրեցին Դանիայի հավաքականից: Բոլոր գոլերը խփվեցին երկրորդ խաղակեսում. նախ դաշտի տերերից 2 անգամ աչքի ընկավ Ռոմեդալը, ապա դրանից հետո Նոյը կարողացավ կրճատել հաշվի տարբերությունը:

Հետաքրքրությամբ էր սպասվում Իտալիա-Անգլիա հանդիպումը: Փոքր-ինչ վերակազմավորված Անգլիայի հավաքականը չկարողացավ հաջողության հասնել այս խաղում: Իտալացիները հաղթեցին 1-0 հաշվով, գոլը երկրորդ խաղակեսում խփեց Գուտուզոն:



Ֆրանսիայի հավաքականի ֆուտբոլիստները հերթական գոլից հետո

Աշխույժ պայքարում ընթացավ Իսպանիա-Հոլանդիա հանդիպումը: Ամբողջ խաղի ընթացքում դաշտի տերերն առավելություն ունեին, իսկ միակ հաջողությանը հասան երկրորդ խաղակեսի միջնամասում: Գոլը տուգանային հարվածով խփեց Իսպանիայի հավաքականի պաշտպան Յիերոն: Մի քանի րոպե հետո հոլանդացի Հասելբայնկը հավասարեցրեց հաշիվը: Շուտով տեղի ունեցավ միջադեպ, որը ստվեր գցեց ընկերական խաղի վրա: Հասելբայնկը կոպիտ խաղաց Յիերոյի նկատմամբ, եւ վերջինս «պոզահարեց» իրեն նեղացնողին: Մրցավարն այս երկու ֆուտբոլիստներին հեռացրեց խաղադաշտից: Խաղավարտից մի քանի րոպե առաջ հոլանդացի Ֆ. դե Բուրը կարողացավ գրավել դաշտի տերերի դարպասը եւ հաղթանակ բերել իր թիմին 2-1:

Մյուս ընկերական խաղերում այսպիսի արդյունքներ գրանցվեցին. Լեհաստան-Իսլանդիա 1-0, Իռլանդիա-Ֆինլանդիա 3-0, Շոտլանդիա-Ավստրալիա 0-2, Հունաստան-Սլովակիա 0-2, Մակեդոնիա-Հունգարիա 0-1, Ռումինիա-Հարավսլավիա 2-1: Աֆրիկայի ուժեղագույն թիմերից մեկը՝ Թունիսի հավաքականը, ընդունել էր Շվեյցարիայի հավաքականին: Այդ խաղն ավարտվեց 1-1 հաշվով:

## Առաջատարները միավորներ են վաստակում

10-րդ տուրով սկսվեց ֆուտբոլի աշխարհի 2002 թ. առաջնության հարավամերիկյան երկրների ընտրական մրցաշարի երկրորդ շրջանը: Հիշեցնենք, որ 10 թիմերի մրցապայքարում առաջին 4 տեղերը գրավողները միանգամից իրավունք կստանան հանդես գալու Ճապոնիայի եւ Հարավային Կորեայի խաղադաշտերում, իսկ 5-րդ տեղ գրավողը եզրափակիչ մրցաշարի ուղեգիրը պետք է վիճարկի Օվկիանիայի լավագույն հավաքականի հետ:

Բոլոր առաջատարներն այս տուրում հաղթեցին իրենց մրցակիցներին: Արգենտինացիները, որոնք վստահորեն գլխավորում են աղյուսակը, Սանտյագոյում 2-0 հաշվով պարտության մատնեցին դաշտի տերերին՝ Չիլիի ֆուտբոլիստներին:

Մեծ հետաքրքրությամբ էր սպասվում Բրազիլիա-Կոլումբիա հանդիպումը: Շատերն էին ուզում տեսնել, թե նոր մարզիչ Լեաոյի գլխավորությամբ աշխարհից քառակի չեմպիոններն ինչպես կդրսեւորեն իրենց: Բրազիլիայի ընտրանին Սան Պաուլոյում անցկացված խաղի ժամանակ առավելություն ուներ եւ քանիցս կարող էր գոլ խփել: Բայց դարպասի գրավում արձանագրվեց միայն մեկ անգամ, այն էլ՝ մրցավարի ավելացրած րոպեի ընթացքում:

Ընտրական մրցաշարի սկզբում Պարագվայի հավաքականի գլխավոր մարզիչը՝ մեր հայրենակից Սերժիո Մարգարյանը, խոստացել էր իր թիմի հետ աշխարհի առաջնության ուղեգիր նվաճել: Հավանաբար, նրա խոստումը կիրականանա: Ասունսիոնում կայացած խաղում պարագվայցիները շատ համոզիչ՝ 5-1 հաշվով, հաղթանակ տարան Պերուի հավաքականի նկատմամբ:



Սերժիո Մարգարյանը (կենտրոնում) ղեկավարում է իր թիմի պարապմունքը:

Ներկայացնենք նաեւ մյուս երկու հանդիպումների արդյունքները. Բոլիվիա-Ուրուգվայ՝ 0-0, Վենեսուելա-Էկվադոր՝ 1-2:

### Մրցաշարային աղյուսակ

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Արգենտինա | 10 | 8 | 1 | 1 | 22-8 | 25 |
| 2. Բրազիլիա | 10 | 6 | 2 | 2 | 21-9 | 20 |
| 3. Պարագվայ | 10 | 6 | 2 | 2 | 18-9 | 20 |
| 4. Էկվադոր | 10 | 5 | 1 | 4 | 12-14 | 16 |
| 5. Ուրուգվայ | 10 | 4 | 3 | 3 | 12-7 | 15 |
| 6. Կոլումբիա | 10 | 4 | 3 | 3 | 8-7 | 15 |
| 7. Չիլի | 10 | 3 | 1 | 6 | 11-13 | 10 |
| 8. Բոլիվիա | 10 | 2 | 3 | 5 | 5-14 | 9 |
| 9. Պերու | 10 | 2 | 2 | 6 | 7-13 | 8 |
| 10. Վենեսուելա | 10 | 1 | 0 | 9 | 6-28 | 3 |

*Բաժինը վարում է*
*ՌԱՅՄԻԿ ԱՎԱԳՅԱՆԸ*

## ՄՐՑԱՆԱԿԱՅԻՆ ՍԿԱՆՎՈՐԴ

ՃԻՇՏ ԼՈՒԾԵԼՈՎ ՄՐՑԱՆԱԿԱՅԻՆ ԽԱՉԲԱՌԸ ԵՎ ԱՌԱՋԻԿԱ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ ԱՌԱՋԻՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՎ «ԱԶԳ»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԿԱՐՈՂ ԵՔ ՍՏԱՆԱԼ ԱՐԺԵՔԱՎՈՐ ՄՐՑԱՆԱԿԸ



Կազմեց Է. ԱՎԵՏԻՍՅԱՆԸ

### Նախորդ համարում տպագրված խաչբառի պատասխանները

**Ուղղահայաց** 1. Զվարթ: 2. Օրի: 3. Միլոս: 5. Ստրես: 6. Քուշան: 8. «Տողես»: 9. Մեդալ: 10. Մալուխ: 12. Շոպեն: 15. «Սպարտակ»: 17. Մերուժան: 19. Մորիս: 20. Համամ: 21. Աստղիկ: 22. Սասուն: 27. Դոլար: 29. Պարոս: 31. Միփան: 32. Փարիզ: 34. Էյֆել: 36. Գորիս: 39. Պախրա: 40. Սարտր: 43. Միս:

**Հորիզոնական** 4. Գվարդիա: 7. Ստարտ: 9. Մորոզ: 11. Թորես: 13. Ռավել: 14. Քարոն: 16. Պեգաս: 18. Օպիում: 22. Մեսեխ: 23. Խոպան: 24. Օսման: 25. Երե: 26. Կուկ: 27. Դիլան: 28. Ճիլոպ: 30. Փարոս: 33. Նազար: 35. Միտալ: 37. Վարյա: 38. Ֆորոս: 39. Պարիս: 41. Մեքան: 42. Չաշիկ: 44. Արգիշտի:

